avez pris de notre éducation, soignée des prin-
cipes d'honneur et de religion, qui, m'ont éga-
lement enseigné à apprécier toute l'étendue de
vos vertus, en qualité de grand propagateur de
l'instruction intellectuelle, et morale. Jouissez, Il-
lustre Patriarche, de la santé la plus parfaite,
et de la plus constante; que Votre bonheur sur-
tout soit inaltérable et durable, comme le seront
envers votre Béatitude, les sentiments de respect,
et d'attachement de mes disciples!

Excellence, (à Nazif Pacha) des vœux que je
fais pour votre Excellence, sont courts en pa-
roles, mais cependant les plus étendus. Ils n'ont
de terme que votre mérite, et nos respects. L'un
et l'autre sont infinis. Je joins mes vœux pour
Votre conservation à ceux des peuples, que votre
Excellence gouverne avec tant de douceur, et de
prudence. Je souhaite à votre Excellence, une
santé, et que votre vie, utile au monde, s'étende
au delà des bornes ordinaires!

Messieurs les Consuls, quels vœux ferais-je
pour vous? quand tout ce que je voudrais vous
dire, est fort au-dessous de tous ce que je sens.
Je vous aime, je vous honore. Cela serait assez,
mais vous en méritez plus. Messieurs, la gloire
file tous vos moments, et le ciel vous doit des
années, pour le bonheur des pays, si dignement
représentés en Orient!

Monseigneur, Excellence, Messieurs, je viens
de finir, mais avant, veuillez bien me permettre
encore un mot.

Permettez, je vous en supplie que notre Direc-
teur et nos chers Professeurs trouvent ici les
assurances de nos attachements, et des vœux que
nous faisons pour eux, à cette occasion solennelle.

J'ose me flatter que les vœux sincères de mes
petits amis, faits pour vous autres, Mesdames
et Messieurs, seront aussi bien reçus que, s'ils
accomplissement dépendait entièrement de notre
volonté.

նենք անոնց համար երախտագիտութեան հանգիստ
և որ առթիւն :

Եւ համարձակիմ յուսալ որ իմ մատաղերամ ըն-
կերակցացոս անկեղծ մաղթանքները, զորս կընենք
բոլոր ներկայ հանգիստականաց համար, այնպէս սի-
րով պիտի ընդունուին, որպէս թէ անոնց կատա-
թումը կախեալ է բոլորովին մեր կամքէն :

Խոստացայ համառօտ խօսիլ, ներեցէք, եթէ որք-
տի առաջադրութենէն ընթանը աւելի խօսեցաւ :

Այս ճառը խորաց Պօլոս Գալթէան շա-
նայգալէի, աշակերտ Ժոս. Վ. արքայաւորի .
27 փետրուարի, 1869 տի. յերուսաղէմ :

J'ai promis d'être court, pardon, si de l'abon-
dance du cœur, la bouche parlait trop.

Discours prononcé à Jérusalem,
le 27 Fevrier, 1869, par l'écolier
BOGHOS HAGOPE HAROUTUNIAN
des Dardanelles.

Այսպէս ինչ-ժողովէի վէճակն ինչ-ժողովէի էֆէնդի սառպէի լեւոյն : Դէ ինչ-ժողովէի
ժողովէի լեւոյն :

Տիգրաւթընը ածիդանէ տալէթ
էտէրիդ աթի իւզ զիքը հապիր քէլամ
լէրիսիդէ :

Իշպու ասրը հազըրմըդուս սայէի
քիթապէթփերվեր տէօվէթլէրին իմ
ու ֆինուս քէնտի գուվէթլինի պու-
լուպ՝ վէ իլիմսիլիկէ դարչը մու-
հարէպէ իտուպ՝ վէ ֆէթհ իտէրէք
ճահտ ու զըյրէթի օլմուշտուր տիւ-
նեա իւզէրիստէն քիւլլէն թարտ
վէ մահլ իթմէք : Պու իմ ու ֆինուս
տէտիկիսիդ եալնըդ մէքթէպլէրտէ
տէքս վէրիլմէքլէ իլմսիլիկի տիւնեա
տէն քիւլլէն թարտ իթմէկէ գաորը
օլապիլիք : Ի պիս մէքթէպ տաթի քէն-
տի պուլունտըդ մահլալ ու էյալէթին
հիւքիւմէթի թարաֆլնտան քէտիլնէ
իհտա օլունան իմթիլալթալթէ վէ ու
զատ սուրէթտէ էօկրէթմէք վէ էօկ-
րէնմէքլէ ֆագաթ թէգատտիւմ տա :

յիրէսիկէ իախալ իտէպիլիք : Իէգա-
լիք մէդքիւր իմթիլալթալթի գապու-
լ իմտիքտէն սօնրա՝ մէքթէպլէրին ին-
շասը իլուն ալ ֆագիլէթքորը զաթ-
լէրէ իհթիեաճ օլունուր : քի օլ գա-
պուլ օլունան իմթիլալթալթի իմթիմալ
իտուպ վէ պիր միլլէթին մէնֆաաթը
իլուն չալըմալլէ իմ ու ֆինուսի իֆա-

զա էյլէմէկէ սէպէպ օլունալար, չիւն-
քի պու տիւնեանըն թէնվիրի՝ եալը-
նըզ իլմին իֆագա օլմալը իւզէրիլնէ
միւլէստէս տիր :

Իմտի Ըլի Օսման քիթապէթ-
փերվեր վէ ազատ մուհիպպ Տէվլէթի
տաթի թէնվիրի քէնտի հիւքիւմէթի
թահթիլնտէ պուլունան մահլէլլէրտէ
փերթէլնիսար իթմէք միւրաալիլլէ՝ իմ
թիլալթալթէր իհտան էյլէտի քէնտի
հիւքիւմէթի թահթիլնտէ պուլունան
ճէմի միլլէթլէրէ : իշպու միլլէթլէր-
տէն պիրիսի Իլմէնի Ալլէթի օլունալ
վէ օլ ինամ ու իմթիլալթալթի գապու-
լ իմթիլ օլմալլէ՝ իմթիմալլնէ պէտա
էթմիլտիր պալը մահլէլլէրտէ մէք-
թէպլէր քիւլաալիլլէ - իլթէ օլ քիւ-
լաալ օլունան մէքթէպլէրին պիրիսի տիր
իշպու Սար Լագուպ Սանասթըրը
նըն մէքթէպի, քի քիւլաալ օլունմուշ-
տըր Ալլէթիմիլլին սատագաթփերվէր
իհտանիլլէ, վէ վաթան մուհիպպ րու-
հանի սէրփէտէրիմիլլ Սաթրիք էֆէնտի
հաղլէթլէրիլնին վէ քէնտի Բահիպա-
նընըն զարթթ հասէնէսի իլէ՝ միլլէթ
չօճուգարըն իմ ու ֆինուսի թահթիլ-
էտիւպ վէ հագաանի իլմին նուրիլլէ
թէնվիր գըլնմալլէ՝ կէրէք Տէվլէթի

Լիւիւի, վէ կերեք միլլէթէ նաֆի էշ
խաս օլմալէրի իշիւն : Եւրէ իսէ վաճի
պէի զիմմէթիմիլ տիր տայիմ իւլ էվ
գաթ թէշէքբիւրլէ տէրոււնի տիլտէն
վէ քիւլլէ գալպտէն նիլազ իթմէք
Հագգ թիէպէա վէ թիէգաւտտէն հագ
րէթէթիւնտէն, քի միլլէթիմիլ մէզ
քիւր ինամ ու իթլյազաթի իհսան էշ
լէշէն շէվքէթսիւմաթ Շէհնշահ Սուլ
թան Լպտիւլ Լքիլ խան էֆէնտիմիլզին
հայաթընա էօմիւ թալլի ու էյյամ
քէսիր իհսան էյէյէ : վէ Լիւ Օման
Տէվլէթինէ իրքեան պիլա գէվալ էպէտ
իւլ էպէտէ, քի սայէյի քէօկէսիւնտէ
քիւլլէ միլլէթէր էաշամաղլէ տայիմ
անտէն գապուլ իթտիկի իմթիսազաթ
ու իհսանաթլէ էօվմ պէ էօվմ թէշ
գաւտիւմէ միւսարաւաթ էթոնլէր :

Թալէպ էտէրիզ օլ տուանըն իհ
սանի տաիի քտաֆէի տէօվլէթ Սէ
մուրին ու խաւէմէլէրինէ, պա խու
սուս Գուտի շէրիֆ միւթէսարիւֆը
Սաաւէթլիւ Սէհէմմէտ Կազիֆ փա
շա հագրէթլէրինէ, քի քէնտի լութֆի
իլէ ճահտ ու իզտամ էտէր հէր
տիւրիւ նիգամաթը իշպու պէլտէի
մահրուսէյէ իտիալ էթմէկէ էհայլի
նին իսթիրահաթը իշիւն : իլթէ պու
նուսլէ զաթը վալլէրինին էհայլիէ
նէ գաւտէր զայրէթի օլմասը պէյան օ
լուր, պունուստա պիր սէմէրէսի պու
կիւն իշպու մահէլլէ թէշիֆիլլէ տա

յըլտա սէզա սըր :

Քէզալքը զաթը միւհթէրիմլէրի
նիզէ պօրձըլուլ էա թիւթալէթլիւ
թաթրիք էֆէնտի սաաւէթլէրի վէ
(մանասթըրմիլզին) իւհանի կիւրու
հու, չիւն քէրէմ ու ինայէթինիզ ի
լէ էլէօվմ Եէնի պիր նուր, Եէնի
պիր հայաթ գապուլ էտէրիզ Եէնի
վէ միւնէվլէր պիր ասըրտա՝ ճիհալէ
թին պէտէլինէ գապուլ իթմէքլէ ի
լում ու ֆինուս աֆիթապընր, կէր

չի ինամլէրինիզէ պէտէլ օլարազ տիւն
Եէվլի խայրաթլէրտէն էտա իթմէք
զայրի միւմիւն տիր : իմտի նիլազ
խտէրիզ սէմալլի փէտէրիմիլ Հագգ
Սիւպհանհի թիէպէա հագրէթլէրին
տէն քէնտի սէմալլի խէզայինլէրինտէն
պէտէլ օլարազ իթտիկինիլ ինամլէրէ
քէնտի խայրաթ ու ըահմէթինի իհ
սան իթմէկէ : քի միլլէթին հիւպալի
իշիւն իթտիկինիլ վէ իտէճէկինիզ իճ
րաւաթլէրին սիւհուլէթէ հալլի օլմա
սընըն Եէք վասիթասը սըր :

Լա՛ էրպապի մահէլլ հագէ իւզ
զինէթ զէվաթլէր, վէ հէմ ճինա էպա
վէ իսիւն, գապուլ իտին խալիս թէշ
էքբիւրիմիլզին չիմտիքի զինէթիմիլզին
աղ իտուպ վէ պու մահէլլէ թէշի
ֆինիլլէ էթտիկինիզ ինանիլէթիմէ
տուհանըլ իշիւն : չիւքի պու թէշի
ֆինիլլէ զիյաւէ թէշվիզ իտէրսինիզ
իլմ ու ֆինուս տայիրէսինտէ պէլ զի
յաւէ թէգաւտտիւմ էթմէկէ, վէ օլ
մաղա՝ ալ իիւսա մուհիպպ, սաալք
շաիս Երմինէն Սիլլէթինէ վէ Բիլի
սէսինէ, վէ սաալք մէտէնի Լիւիւթ
իւշ շան Օմանլը Տէօվլէթինէ :

Սաաւապ Պ. Սաաւապին
Իլիլի պիլիֆանի Սա
Լապպա Երմինի Սանա
Գուտա Շէրիֆ Լըրլի
ԱՂԱ Էրպապի Կ

ԲԱՐՈՅԵԿԵՆ՝

ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ՔԱՂԱՔԱՎԻՐՈՒ ՊԱՏԱՆԻ
(Շարունակութիւն, տես թիւ 1) :

Ի Դ .

ՈՐԴԻՔ

Ո՛հ ինչ քաղաք անուս է Հայ ա
նունը . նայ իսկ Լստուած երբ մեզի
աղօթք ընելուն կերպը սօվորջաւց՝ առ
զեց սր Հայր ըսելով սկսենք :

Հայրդ. եղաւ քեզի կեանք տուալ, ով պատուեալ, հիմա անոր հաւատարմութիւն հորհուր քան մըն ալ կու տայ որ է գատախորհուրթիւնը. և սոյսպէս առանց քու աշխատելուդ ինքը քու փառաբանութիւնդ կը լեցնեն. քու բաղդդ շինելու համար կը բրտնի ու կը յոգնի. քու ընտրելագոյն բարեկամդ է. միշտ հետդ է. անդտգար նորանոր բարիքներով գրեզ կը լեցնեն. ամեն ունեցածը քեզի պիտի թողու :

Իսկ մայրդ, որչափ քեզի համար ցաւ քաշեց, երբ տղայ էիր ու չէիր կրնար շարժիլ, չէիր կրնար խօսիլ, բան չէիր հասկընար, որչափ նեղութեանց համբերեց քեզի համար, որչափ գիշեր առանց քնանալու անցուց, որչափ զուարճութեանց պատճառ եղաւ քեզի. հետդ խնայց. հետդ լացաւ. ով գրեզ հիւանդութեանդ ժամանակ հոգաց. ով տկարութեանդ օգնական եղաւ. ով խօսիլ սովորեցուց քեզի. ով գարձեալ հորդ անունը և բուն Հայրդ որ երկիրքն է պաշտել ու փառաւորել քեզի սովորեցուց :

Հիմա ալ նայէ որչափ սիրով ծընողդ գրեզ կը կրթեն : Ի՞նչ որ խիստ կ'երեւնան ստիպելովնին որ ուսման ու արհեստի մը ետեւէ ըլլա՞ծ գիտնաս որ լաւութեանդ համար կ'ընեն, որ պէս զի կարենաս արժանապէս առաքինեաց ընկերութեանը մէջ մտնալ, թեթեւ պակասութիւն մըն ալ ընես կ'ուղղեն. վասն զի գիտեն որ երթալով հեռոջհեռէ կը մեծնան. ան որ հիմայ քիչ մը շատ ուտել սիրող է՝ ատեն նոք անժուժկալութեամբ կրնայ հիւանդանալ ու առողջութիւնը կորսնցնել. բարկացողը կատաղի բան մը կը գառնայ. անհոգի՝ ծոյլ. կատակով ըստաւած առտ մը թէ որ չուզուի՝ կառարեալ ստախոսութեան կը փոխուի : (Քհնեալ ըլլան ծնողք որ պատշաճ

պատիժներով մեր սրաին սկզբնական արտերուն արմատները կը խլեն :

Եւ տառաւոր, ով պատանի, ելլելուդ պէս, Եւտուծոյ շնորհակալ ըլլալէն ետքը, մէկէն վազեցիր հայրդ բարեւելու, երբ որ դպրոցէն դառնաս սիրելի մայր ի՞նչ ըսելով մօրդ պիտի երթաս. ան, միտքդ եկան կամ պիտի գան արդեօք ան խեղճերը որ ոչ հայր ունին և ոչ մայր. աղօթք ընեն որ Եւտուած զիրենք պահէ, և վերջը յիշելով որ դուն ալ օր մը իրենցմէ պիտի զրկուի՝ կրկնապատկէ քու սէրդ, յարգէ, օգնէ ու գուժ ունեցիր վըրանին :

Եւստուեններն անգամ իրենց ծընողքը կը սիրեն. իսկ պատուելը՝ բարեւ տալուն ու արտաքին քաղաքավարական կերպերուն վրայ կեցած չէ. այլ իրենց հրամանաց խոնարհութիւն ու հեզութեամբ հպատակելուն վրայ է : Շնորհացդ օգնելով, իրենց քու օգտիդ համար ըրած այնչափ աշխատութեանց փոխարէն երախտագիտութեան պարտք կատարած կ'ըլլաւ ի՞նչ որ պակասութիւններ ունին, կ'ըսես. ով կայ որ պակասութիւն չունենայ. նայէ, իրենք քու կիներուդ ինչպէս արգահատեցան : Վանի ծերանան հիւանդոտ, արանջացող ու նեղսիրտ կ'ըլլան և միթէ ասոնց համար պիտի անարգեն զիրենք ու անգթութիւն բանեցընես. մտածէ թէ մենք ալ տըղայութեան ժամանակնիս ինչպէս հիւանդոտ, կանչուըւտող ու նեղսիրտ էինք :

Պարտեալ Հայր քո և Ղայր. ասկայ Եւտուծոյ պատուիրանքն է : Ի՞նչ որ դի մը բարի քաղաքացի կ'ըլլայ. և ինչպէս որ մենք մեր ծնողացը հետ վարուինք՝ մեր որդիքն ալ մեզի հետ նոյն պէս պիտի վարուին : Եւնեն կու գայ որ դուն ալ տարիքդ առնելով որդւոյ

տէր պիտի ըլլաւ, անպէ՛ թէ անոնք քեզմէ հեռանան, խորհուրդներուդ մօտիկ չընեն ու կարօտութիւնդ չհագան, անանկ որ՝ այն միջոցին որ աւելի կարօթ ես՝ քեզի ընկերութիւն ընող մը չունենաս։ Բնէ վիշտ, Բնէ ցաւ չէր ըլլար քեզի աս բանս։ Այո՛, չըլլայ որ ծնողացդ առ վիշտերը պատճառելով նոյները դուռն ալ քաշես։

Ի՛նչ.

Ե Զ Բ Ա Ր Բ

Ո՛հ, Բնէ սիրուն, Բնէ լաւ բան է երբոր եղբարք մէկտեղ կը բնակին։ Հոռ, հոռ, եղբարք իմ և քորք, եկէք իմ չորս կողմն պատեցէք. բնութեան ինձի տուած բարեկամներն էք դուք. նոյն ակորժն ունինք. նոյն ցաւերն ու մի և նոյն յոյսերը. ո՛հ ուրեմն մէկմէկաւ բարեացը փափաքինք, իրարու վըրայ տեսած պակասութեանցն արգաւհատինք. կարօտութիւն որ ունենանք՝ օգնենք, բարեգործութեան յորդորենք մէկզմէկ, ես մէջերնիս ամենէն մեծն եմ. բայց գիտեմ որ ամենէն պզտիկն ալ ինձի հաւասար է, ու ես որ աւելի փորձ ունիմ, պէտք է ուրիշներուն իբրեւ խնամակալ ըլլամ, աւելի սիրեմ զձեզ, բարի օրինակ ըլլամ, ու թէ որ դժբաղդաբար հայրերնիս մեռնի՝ ես իրեն տեղը բռնեմ. դուք ալ փոխադարձ պէտք է բոլոր սրտանց ու ձեռքերնէդ եկածին չափ իմ բարիքս ուզէք. և իմ ձեր վրայ ցուցը ցած խնամցա դուք ալ ձեր կողմանէ օգնէք։

Անասանելի է ան տունը որ եղբայրական միաբանութեան վրայ կեցած է, ու երբ որ մարդիկ ուզենան ճաննալ քու ինչ տեսակ մարդ ըլլայդ, կը դիտեն թէ եղբարդդ հետ Բնէպէս կը վարուի։

Այո՛, պէս պարսական ենք մեր ուրիշ աղգականներուն վրայ վերջի աստիճան սեր ցուցընել, եւ ամենայն փութով, յօժարութեամբ ու սրտանց իրենց ծառայել։

Ի.Օ.

Բ Ա Ր Բ Կ Ա Մ Բ

Օ ամենքն ալ սիրելով հանդերձ՝ կան անձինք, զորոնք ուրիշներէն աւելի կը սիրենք, և արդէն դուք, ո՛վ պատահեալք, ձեր ընկերացաց մէջ մէկն ունիք որուն հետ աւելի սիրով կը վարուիք, որուն ձեր սիրտը կը բանաք ու քաշած թէթեւ նեղութիւննիդ կը պատմեք, այն է ահաւասիկ ձեր Բարեկամ։

Այսուհետեւ Վազարոն իրեն բարեկամ պատշաճ, ու երբ որ մեռնիլը լսեց՝ լացաւ, ու նորէն կենդանացուց։ Իսրաւընէ բարեկամը գանձ մըն է. բայց չեմ ըսեր ան բարեկամներուն համար. որ դիւրաւ ամեն տեղ կը գտնուին. որոնց մէկ խօսքով ալի Բարեկամ կ'ըսենք. այլ անոնց համար կ'ըսեմ որ իրենց հանգիստը զոհելով պատրաստ են ծառայելու, օգնելու, խորհուրդ տալու և պաշտպանելու. անոնց համար, որոնց ծոցը կրնամ ես արցունքս թափել. ապահով ըլլալով որ ներումն ու կարեկցութիւն պիտի գտնեմ։

Այդ մանկական բարեկամութիւնները, ո՛վ պատահեալք, որ այսօրուան օրս դպրոցին մէջը իրարու հետ կը հաստատեք, ո՛հ գիտէ, թերեւս բոլոր կեանքերնուդ մէջ ձեզի ընկեր ըլլան. բայց բարեկամութիւնը տեւողական ըլլալու համար՝ փոխադարձ իրարու վրայ սէր ու մեծարանք պէտք է ունենալ. և այդ սէրն ու մեծարանք առանց առաքինութեան չեն ըլլար։ Այն առաքինի մարդու հետ բարեկամ

եղիր, որ միանգամայն խոհեմ ըլլայ ու կարենայ չը գիտցածդ սովորեցնելը գաղտնիքդ պահէ ու խորհուրդ տայ: Եւ խելք մարդու մը կարծիքին հետեւողը՝ շատ չանցնիր կը զգըջայ. բայց ըզգուշացիր անոնցմէ որ զքեզ միայն գուրկէ գիտեն ու շողոքորթութեամբ փխտերդ ալ կը բարձրացրեն: Եւ որ իր Բարեկամին անհաճոյ ըլլալէն ինչի՞նչ տեսնուի որ յանգիմանուիս սիրով մօտիկ ըրէ, յիշելով՝ որ աւելի լաւ է բարեկամին հարուածը՝ քան թէ թշնամոյն համբոյրը:

Եւ ասո՞ք եղած է թէ երեք բանով բարեկամ մը հաստատուն կը մնայ. առջեւէն պատուելով, ետեւէն գուրկելով, կարօտութեան ասան օգնելով, միտքդ պահէ ասոնք:

Եւ մենք իսկ ալ մեր տկարութիւններն ունինք՝ ուստի բարեկամ բարեկամի մէջ պէտք է արգահատող ըլլայ. աւաքին ու քաղաքակիրթ մարդ մը իր Բարեկամը պաշտօնականօրէն հանդիպելով, ոչ երբեք կը մոտենէ, և կամբին գէմ գործէն կը խորշի. կը ջանայ

զինքը ուրախացընել և օգտակար ըլլալ, ինչուան նաև իր անձին փրատող ալ, ուրիշներուն առջեւ պակասութիւնները կը ծածկէ. բայց նաեւ կը ջանայ որ ուղղէ. շատ մեծ բաներ չի պահանջեր. սիրով իր վիշտերը մօտիկ կ'ընէ ու բարեկամին հեռանալէն ալ ետքը՝ ինքը չդատարի նոյնպէս անոր բարիքն ուղեղէն. աւելի եւս իր սէրը հիւանդութեանցն ու կարօտութեանցը մէջ կը ցուցնէ. վասն զի թշուառութե մէջ բարեկամութիւնը յայտնի կ'ըլլայ, եթէ գոհութիւն մը ծագի կը ջանայ պատճառները վերցընել: Եւ ինչ խելք է հաճոյից մը կամ բանի մը յամառելով գանձ մը կորսնցընել:

Իսկ եթէ բարեկամդ չափը անցընէ, ուղղէ զինքը, ու բոլոր ջանքդ թափէ զինքը բարի ճամբուն մէջ հաստատուելու. թէ որ չկարենաս յաջողիլ՝ բաժնուէ. բայց միշտ թաւ կ'իտնաս որ բարեկամութիւնը կրնայ քակուիլ՝ բայց պէտք չէ կտրուի: Եւ թէ բարեկամութենէդ կը դադրիս՝ մի դադարիր անով իր բարւոյն փափաքելէն:

(Պիլիպի շարահայտի):

Աղուէն Կուզ և Աքաղաղ:

Օր մի Եղուէն անթութեամբ ոգեստատ, Եւ որկորոյն մի կը փնտռէր ի թափառ, Գնաց Կուզին դաշինք ըրին միաբան, Ար գիւղամերձ ագարակէն հաւ որսան:

Եղուէն եկաւ ցուրտ Կովկասեան դաշտերէն, Ինչպէս շուտով ընկերացաւ հեզօրէն, Եւ րոպական քաղաքակար ընդ Կուզին, Ար կրթութեամբ մէկմէկէ խիստ տարբերին:

Սինչ գեռ ասոնք ճամբայ կեղծին իրար հետ, Կամ ըլլալ Կուզն Եղուէնին կարապետ, Կտրտուելով կը մօտենայ հաւնոյին, Թառին վերայ ցաթկեց Եղուէն այն կէտին:

Կուգը դուրսէն կը մտածէր սմբելով,
Ներս մտնելու միջոց գտնել ապահով,
Ըքազաղն ալ կուահելով այս ամեն,
Բարձր ծայնով կը կռկռայ հաւնոցէն:

Երդին Լըուէան այն Կովիստու խորամանկ,
Գուշակելով ապագային մեծ վտանգ,
Սիրտն ի տաքնապ իւր խորհրդով ժանտային,
Ըյսպէս կ'ըսէ ահանջն ի վաթ Ըքլորին:

«Եղբայր սիրուն, Բնէ կը պտռաս տխրադին,
Ի՞նչ զօրութիւն ունի այդ խեղճ կենդանին,
Ի՞նչ վտանգ կայ կռկռալու, մի վախմար,
Քու եւ անոր մէջ տեղը կայ մեծ պատուար:

Ո՛չ ապաքէն ձեր տունը խիստ ամուր է,
Եմաստքի մինչեւ անգամ արջերէ,
Թանկարեղի ընել զքեզ կողպուտ,
Ուրեմն Բնու կը վրդովն անօգուտ Կ:

Բայց Ըքազաղն արհամարհեց գլխովին,
Հրապուրիչ համոզումներն Լըուէսին,
Ստանաւ թեան խորհուրդն զգաց յայտնապէս,
Բաւ, «Կորիր, դու կեղծաւոր աներես:

«Ո՛չ դու էիր անցեալ աւուր այն ձիւազ,
Որ մարտցիր մեր դրացւոյն Ըքազազ,
Կուգեա մեզ ալ քու որկորոյդ ընել զոհ,
Որ չար կամքդ հասնի կատար, նենգախոհ:

Հերիք չեղան ուժիրներդ մահահոտ,
Օր հայրենիքդ կրեց ձեռքէդ արիւնստ,
Չը դիմացան խեղճ կենդանիք քու չարեաց,
Հոնկէ ըզքեզ հագիւ ըրին արտալած:

Չըլայ թէ ըլլաս այն ցեղերէն բանաւոր,
Որո՞ք ծնան Ղեկեւտին, Լենկեմուր,
Ըրդէն ձայնդ ալ ծանօթ է մեզ և վկայ,
Ուստի խաբուով այդ ձեւերուդ հաս չկայ Կ:

«Իւ դու սմբած ցած կենդանի նենգատու Կուգ,
Կարծեմ խորէն կը մտածես մուայոյդ,
Ի՞նչ փբացումն այդ Բնէ խորհուրդ մտադիր,
Ո՞րժէ զմեզ խոր քնոյ մէջ կարծեցիր:

Կարծեցիր որ հոգւոյդ գինն ալ արժէ նոյն,
Ինչ որ մորթըդ կ'արժէ հարուստ պէյերուն Կ,
Ըքլորն այսպէս խայտառակեց երկուքն ալ,
Իւ սկսան հաւերն ամեն կռկռալ:

Բայց Լըուէսն հաւերուն այս ձայները,
Ենչայ քերեց, կարծելով որ տանտերը

Խոր թմրութեան մէջ է ինկած տեւական,
 Որով հաւնոյն իրենց սեպեց սեպհական:
 Այսպէս ահա կուգն ու Աշուէս միաբան,
 Խորին յուզմամբ խորհրդակցիլ սկսան.
 Թէ Բնչ կերպով բաժնելու են որսերնին,
 Ագահութեամբ կը տագնապէր սրտերնին:
 (Չը խորհելով որ վտանգ կար առջեւնին,
 Գետ չը տեսած կը տօթտէին ռաքերնին):

Սէկ մ'ալ տեսնես Բնչ ծաղրելի քեզարան,
 Ստերմութիւնք ատելութեան փոխուեցոս.
 Վէճը տաքցաւ ագահութեան բայերով,
 Իրար զիրար բրդագեցին ճանկերով:

Սի կողմանէ ձայն հաւերուն և մեծ կոծ,
 Սիւս կողմէն մենամարտից շքնկոյ:

Հասաւ ականջն տանուտէրին արթնցող,
 Ի՞ր ի ձեռին կուգն ու Աշուէս սատկեցող:

Որչափ այսպէս նենգամիտներ կը ճգնին,
 Գործել գաղտնի ամեն վնաս ի մթին.

Եւ խափանել արգելքներն այն զորագոյն,
 Որոնց կեանքը մահ է իրենց գործերուն:

Թէպէտ խաբուողն անշուշտ վնաս կը կրէ,
 Իսկ Բնչ օգուտ անխաբին ալ կորուստ է.
 Որուն պատճառ խորին քունն է տանտիրուն,
 Երանի, որ ունի հսկող աչք արթուն:

Ինչ օգուտ էր Աքաղաղին արթնութիւն,
 Ար չէր խաբուած նենգաւորին խօսքերուն.
 Թէ որ տանտէրն ընկղմած խոր քնոյ մէջ,
 Չը գար հասնէր, դադրեցնէր նոցա վէճ:

Արթուն կեցիք, տանտէրներ,
 Սարհամարհէք այն ձայներ.
 Ար միշտ անքուն ձեզ համար,
 Կ'աղաղակեն անդադար:

Ուլէս Վ. Խօփ-Կճեանց:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

(Ազատ Թարգմանութիւն)

Յիսուսի Քրիստոսի կենաց բոլոր նկարագիրը կը քաղենք իւր գործքերէն, պատուիրանքներէն և խօսքերէն, որոնք պարունակուած են Աւետարանի մէջ, առանց յաւելցունելու և սեթեւեթելու. վասն զի մարդկային լեզուն կարող չէ այնպէս լիովին պատկերացնել զ(Յիսուս, ինչպէս պատկերացած է Աւետարանի մէջ, վասն զի Յիսուսի կեանքը անհուն է և գեր ՚ի վերայ, իւր խօսքերը՝ ամենաճշմարիտ և իւր պատուիրանքները ամենախորին և ամենազեղեցիկ են։ Չենք խօսիր այն կնիքին վրայ, զոր հաստատեց (Յիսուս իւր չարչարանքով Պետքեմանի պարտիզէն սկսած մինչեւ Պողոթմայի խաչին բարձրութիւնը։

Այսուամբ, ըստ հին կտակարանին, մի է և միշտ նոյն, այսպէս է և Յիսուս ըստ նորոյն։ Անոր մէջ ամենա հաստատ և ամենակատարեալ միութիւնը կը թագաւորէ, թէ կենաց մէջ, թէ հոգւոյն, թէ խօսքերուն և թէ գործքերուն։ Այս գործեց հաստատ կամքով առանց փոփոխութեան ենթարկուելու։ Այսպէս նա իւր 12 ամեայ հասակաւ երեւցաւ Տաճարին մէջ երբ որ պատասխանեց իւր մօր, որ անհանգստութեամբ զինքն կը փնտռէր, բերելով թէ «Չէք գիտեր որ ես իմ Հօրս տունը» (1) պիտի ըլլամ, Այսպէս Յիսուս իւր փրկաւետ քաղովութեամբ կը շրջէր ՚ի Ղալիլէ և Ալլուսաղէմ իւր աշակերտաց հետ, շատ անգամ շրջապատուած Փարիսեցիներէն և մեղաւորներէն, Պիղատոսի և Կոյիսիայի առջեւ նա այնպէս էր, ինչպէս որ էր այն ամէն մարդ-

կանց, կանանց և մանկանց բազմութեան մէջ, որ իրեն շուրջը կը ժողուէին նորա խօսքերը լսելու համար։ Ամեն տեղ և ամեն պարագայից մէջ մի և նոյն հոգւով կը խօսէր, մի և նոյն լոյսը կը տարածէր, մի և նոյն օրէնքը կը քարոզէր։ Կոտորեալ և անփոփոխ միշտ իբրեւ Աստուծոյ և մարդկան Որդի, մարդկային բոլոր վշտաց և փորձանաց մէջ նա գործ կը գնէ իւր աստուածային զօրութիւնը մարդկային սեռին փրկութեան համար։

Ս'ենք համառօտ կը խօսինք, վասն զի ինչպէս կրնանք խօսիլ մանրամասն նախաբ (Յիսուսի Քրիստոսի վրայ, որ մարդացեալ Աստուած է և կը գործէ զոր Աստուած միայն կարող է գործել և կը կրէ զոր մարդ միայն կրնայ կրել. և այն ամէնը կրնէ որպէս զի փրկէ և վերստին գնէ մարդիկները մեղքէն, որպէս զի զանոնք դարձունէ վերստին Աստուծոյ գիրկը։ Ինչպէս կարելի է չափել կամ կշռել ըստ արժանեաց այնպիսի անձի մը և այնպիսի նպատակի մը անձառ խորհուրդները, Ինչեք անցան և ինչեր կրեց մարդացեալն (Յիսուս)։ Ո՛վ կարող է նկարագրել (Յիսուսի ոխորութիւնը. ո՞վ կարող է բացատրել նորա թաղմութիւնը, ո՞վ կարող է պատկերացնել նորա հաստատութիւնը, որով առանց վարդապետելու զիմեց ՚ի խաչ և ՚ի մահ։ Որ մարդկային լեզուն կը զօրէ լիովին պատկերացնել (Յիսուսի անձնաւորութիւնը, որուն մէջ կատարուեցան օրէնք և մարդարէք։

Այն մարդիկը, որոնք Յիսուսին չեն հաւատար և գերմարդկային չեն ընդունիր նորա գործքերը և խօսքերը, շատ լճուառ են. նոյա համար Յիսուսի պատմութիւնը սովորական պատմութիւն մ'է։ Ինչոյ այս (Յիսուսի Քրիստոսի գերմարդկային զօրութիւնը

(1) Պ. Գ. Բ. 49.

ներն ու բնութիւնը ուրացողներն անգամ չեն կարող ուրանալ անոր գործոց և պատուիրանաց, անոր կենաց և բարոյական օրինաց գերազանցութիւնը և մեծութիւնը: Հիշատի, ոչ թէ միայն մարդ չի կրնար ուրանալ, այլ մանաւանդ անոնց վրայ կը զարմանայ, զանոնք կը հռչակէ հաճութեամբ և ուրախութեամբ արտի: Ինչքան կը սխալին այն մարդիկը, որ Հիսուսի պատուիրանաց և օրինաց գերազանցութիւնը կրնգուեն և զինքը չեն ընդգուծիր: Ինչ հասկացութիւն, գու աւա, ինչ տկարամտութիւն:

Անք կը հաւատանք և կը տեսնենք Մեկտարանին մէջ, որ Հիսուս ամեն մարդիկներէն կատարեալն է, անհամեմատ, ամենիմաստ և ամենազգացուն, տիպ առաքինութեան և գեղեցիկ բարոյականութեան, արդար և օրինաւոր գլուխ մարդկութեան և հետեւապէս Մատուած՝ մարդացեալ: Մերա առաքեալները, որք զարմանք առ շեցուցին զմարդիկ իրենց ընթացքով, և կրեցին ամեն չորաբարեք և նեղութիւն անոր հաւատարիմ մտալու և ի գլուխ անելու նորա գործը, իրապէս հաւատացին այս ամենը: Հիսուսի կամբը գլուխ ելաւ և կատարեցաւ, կռապաշտ աշխարհը քրիստոնէսոյ դարձաւ, և ամբողջ երկիրը ուրիշ բան մը չունի ընելու, բայց միայն երթալու այն ճանապարհը զոր նշանակեց Հիսուս: Ինչպիսի հակառակեցաւ, բայց Հիսուսի կամբը յաղթանակեց, ինչ կարող ենք ըսել այս մասին:

Պատմութիւնը երկու հիման վրայ կը կայանայ, նախ՝ ճշմարտ վրայութեան վրայ՝ անձանց նկատմամբ, երկրորդ՝ բարոյական հաւանականութեան վրայ՝ իրողութեանց կապակցութեան և անձանց արարքներուն նկատմամբ: Հիսուսի պատմութիւնը մարդկանց

սովորական պատմութեանէն գերազանց է: Քննադատութիւնը և փխտախառութիւնը կը խնայարհի նորա առջեւ: Հիսուսի պատմութիւնը քննելու և հասկանալու համար մարդկային միտքը բաւական չէ, այլ հարկաւոր է և սիրտ, հարկաւոր է սուրբ զգացմունք: Ի սկի մարդկային ճարտարմտութեամբ քննել Հիսուսի պատմութիւնը, կը նշուենակէ գահընկէց տանել զՀիսուս՝ որ գին Մատուոյ:

Հիսուսի աւետարանական պատմութիւնը մեզ կը ներկայացնէ զՄատուած գերբնական գործերով, աւրաբազորմութեան և նախախնամութեան որանելիքներով: Իրենց սրտմտութեամբ պանծացող մարդիկներէն ոմանք, չը կարենալով գերաբուռ խորհուրդները ըմբռնել, փորձ փորձեցին Հիսուսի պատմութեան գերբնական մասը ուրանալ ու բնական կերպով բացատրել, տակայն այս եղանակաւ առաւել իրենց տկարամտութիւնը յայտնեցին, քան թէ Հիսուսի փառքը նուազեցուցին: Ինչո՞ւնք որչափ տաղնային, ուրիշ բան չեն կարող ընել, թէ ոչ մտացածիր՝ գերբնականի տեղ զենլ և իրենց քրիստոնէական զգացմունքներու աւերակաց վրայ, իրենց հաւատքի փոշոյն վրայ՝ իրենց տկարամտութեան խորխուլ արձանք կանգներ:

Իհաւ այսպէս է մարդկային մտաց անհանգստութիւնը, ոչ անով գոհ կ'ըլլայ, ինչ որ ազատ է ընելու, և ոչ անով, ինչ որ արգիւրեւած է ընելու: Օգործմանալի չէ ուրեմն որ սահմանաւոր աշխարհի մէջ սահմանաւոր կարողութեան տէր մարդը կը ձգտի ելլելու անհուն Մատուածութեան խորհուրդները քննել:

Ս. ՍԻՄԵՆ Ը. ՍԻՄԵՆԻԱՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐԵՅԻ:

ԺԵՄԵՆԿԱԳՐԵԿՈՆԻ

Դարնանային եղանակաց բացուելուն և զատկական տօնի մերձենալուն պատճառաւ Լեւոնացի ճանապարհորդներ և ուխտաւորներ սկսած են արդէն յաճախել ի սուրբ քաղաքս :

— Երկայ ամսոյ մէջ նոր Գառաւոր (Սորա) եկաւ քաղաքիս համար, որուն ղիմաւորեցին իւրաքանչիւր ազգաց թարգմանները և մանաւանդ բարձրագոյն մահմետականներ և շքեղ ընդունելութեամբ անոր գտնուար պատուեցին :

— Տարւեան Գեր. Արքազան Սարգիս արքեպիսկոպոսը Յոպէի նաւահանգիստը հանդիպելով գնացած է Ալգիարոս, ուրիշ քիչ ժամանակէն յետոյ պիտի քաղաքս գոյ յուխտ և յերկրագութիւն արքազան Տեղեաց :

— Բաւական ժամանակէն յառաջ երկրագործական Բնկերութիւն մը կազմուած էր քաղաքիս մէջ և խրնդիր առաջարկելով Գամանկոտի կուսակալութեանը վաւերացումն խրնդրած էր : Եւս վաւերացման հրամանագիրը ընդունուեցաւ ներկայ ամսոյ մէջ և յիշեալ բնկերութիւնը մտադիր է շուտով ձեռնարկել գործոյն :

— Սուրբ ԼԹՈՒՅՈՅ վարժարանի պարգեւաբաշխութեան հանդիսի օրը՝ ԼՐԶԱԿ Յովսէփեան, Սերովէ Պօղոսեան, Սարտիրոս Յակոբեան և Կարապետ Կարիկեան աշակերտները, իրենց համար նշանակուած պարգեւները Բաժանողաց ձեռքէն ընդունելով և Հանդիսականաց առջեւ վերտին սեղանին վրայ ձգելով խիտ մեծ ցաւ պատճառեցին ականատեսներուն իրենց յաղգնութեամբ և ապերախ տուութեամբ, այնպէս որ, յետ հանդիսին քանի մի ուխտաւորներ առաջարկեցին Արքազան Պատրիարքին ահա

րապարակական ապերախութեան ցոյցը պատճել ի խրատ այլոց աշակերտաց : Երբն Արքազնութիւնը քանի մը բարձրատիման միարանից հետ խորհրդակցելով որոշեց խալատ արձակել զանոնք դպրոցէն, մանաւանդ երբ որ Սարժարանի յեղութեան արձանագրութեանն ստուգեց թէ յիշեալ աշակերտները քանի մի անգամ իրենց աշակերտութեան շրջանին մէջ տոյն օրինակ թերութեանց մէջ գտնուած ու յանդիմանուած են, բայց զժառանգաբար ապարդիւն ելած է :

Սուտի այս վերջին յանդգնական ցոյցը անտանելի ըլլալուն և մանաւանդ օտար հանդիսականաց առջեւ նախատինք բերելուն համար ստիպուեցաւ Արքազան Պատրիարքը այն միջոցը ձեռք առնուր Սոյն աշակերտներէն Կարապետ Կարիկեանը իւր բնական հիւանդութեւ պատճառաւ արդէն բժշկաց խորհրդով որոշուած էր իւր հոգիները դարձնելու և միայն հարցաքննութեան կ'ըստատուէր :

— Լմոյս մէջ երկու աշակերտացու պատանեակներ կարեւոր վկայագրով հանդերձ Ս. ԼԹՈՒՅ ժամանեցին և ընդունուեցան ժառանգաւորաց դպրոցը : Եւս բժշկի վկայութիւնը նուցաւ առողջութեան մասին :

« Սարգիս Ստեփանեան թաղացի 14 ամեայ և Սնեցի Դադարոս մահտեի Սարգիսեան 13 ամեայ պատանեակները լոտ բժշկական օրինաց բռնութեան ենթարկելով քաջառողջ և ամրակալով գտայ :

Ս. ԲԻՆԿՅԱՆ ԲԺ. ՍԵՂ

ԼԹՈՒՅ ԼԵՈՒՆԱԿՅԱՆ :

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Դոր ճաշակ դպրութեան, կամ
Պարտաստութիւն առ ձեռն:

Դորեկ միջոցիւ:

Յանկոյցող կարող են գնել սոյն գրք
եանքը, ինչպէս Վճռուէնայնպէս և իւր
գործակալներէն զանազան բազմաթիւ մէջ:

ՄԱՄԼՈՅ ԶԱՆԶՈՒԱԾ

Բերականութիւն Հայ - Վաղ.

Պատմութիւն Ստամբուլի Ռ.Ո.

Հայեցոյ:

Լեւոնի Ստամբուլի:

Ինչ հանրական Երբոսի Շնորհաւ
Ընդ:

Յիշեալ մատենից տպագրութիւն
նր արդէն աւարտուելու վրայ է, ու
բոց ընտիր և խնամով տպագրութեան
մասին յետոյ պիտի խօսինք:

ԳՈՒՐԲ ՆԱԼԻՔ

(Երբեմնութիւն, տեւ թիւ 1):

8. Բանի մի զինուորներ պատերազ
մի տառն գիւղի մի մէջ կը բնակէին,
իւրեզ՝ գիւղացիի մը պատահելով զայն
գանակածելէն վերջը անոր տառն ու
վերարկուն առին: Գիւղացին ալ գրեւ
դապեւտին մեկուն գանգաւորու գնաց,
որնոր ըսաւ անոր, բարեկամ, երբ զին
ւորներս զբեղ կողոպտեցին, այս զգես
տորդ վաճէ էր: Ըյս տէր իմ, պատաս
խանեց, գնա ուրեմն ու ապահով եւ
ղեր, ըսաւ գնդապետը, որ իմ զինուոր
ներս չէին, ապա թէ ոչ մինչուկ շա
պիկդ ալ կ'առնէին:

9. Ընտիր երիտասարդ մը նամակ գրել
կուղէր իւր մէկ բարեկամին, և ինչպէս
բնեւորը չըգիտէր, նամականի մի գնեց,
և իւր բաղձանքին համեմատ նամակ
մի գաւ և ճշդիւ օրինակեց զայն, և
խրկելու տեղը խրկեց, յիշեալ բարե-

կամը որ մի եւ նոյն գիրքը ունէր, և
նոր մէջ գտաւ այս նամակը, և անոր
սա խօսքերով պատասխանեց. « պարոն,
նամակդ ստացայ, թուղթը դարձուր
և անոր պատասխանը կը գտնաս »:

10. Յոսէփ Կարբը, Վաղղից բա
ղարներէն մեկին իւր մարդ իններէն յա
ռաջ հասած ըլլալով, պանդոկապետը որ
զուարթ բնութիւն մի ունէր, հարցուցաւ
նոր, կայսեր քովի մարդ իններէն եւ պա
տասխանեց թէ ոչ, Վիշ ժամանակէ
մի վերջը իւր տնեակը մտաւ, մօրուքը
ածիւնը գրազած տոներ հարցուց
անոր, կայսեր քով պաշտօն մի ունի՞ս,
այո, պատասխանեց ինքնակալը, երբե
մին կը սափեմ:

11. Գիւղացի մի իւր ցաւին համար
բժշկին խրատ հարցնելու կ'երթայ.
բժիշկը հիւանդութիւնը բնեւորէն վեր
ջը, գրտեղանին առջեւ նստաւ, և
անոր հիւանդութեան վերաբերեալ
տոմակ միջոցեց, և անոր տալով ը
սաւ՝ վաղը առաւօտ ասիկայ կեր և
շուտ մի առողջութիւն կը գտնաս:
Գիւղացին կարծելով որ նոյն իսկ գե
ղը՝ թուղթն էր, մեծ յուսով ետ դառ
նաւ միւս օրը առաւօտ կանուխ կուլ
տուաւ զայն և կատարելապէս առող
ջացաւ:

12. Ընտանական աղբատ մի պարտաւ
տէրներուն իւր պարտքը չը կրնալով
հատուցանել, առտու մի կանուխ ել
նելով կրտէր. անոց ամեն ալ սատանան
տանի, որ այսօր ինձմէ դրամ խնդրե
լու պիտի դան: Ըյս խօսքը լռեցու
նելուն պէս սկսան գուռը զարնել. բա
ցաւ գուռը և տեսաւ որ իւր շորս
պարտատէրները ներս մտան, որոնք առ
նեւորէն պահանջել սկսան ըսելով՝ թէ
տակաւին մօռնալու ես զմեզ, կ'երդ
նաւմ, ըսաւ անոնց ազնուականը, որ
քիչ մի յառաջ ձեր վերայ կը մտածէիս:

(Պիտի լաւագործի):

2006年1月

[illegible]

Սուրբ Բովնանէս Նիկիոցոս աղա :
 Սուրբնեան Բովնանէս Էֆէնոսի :
 Ստանդարտն Կարապետ և Բարսեղ աղայք :
 Ստեփաննան մահտեոյ Մկրտիչ աղա :
 Վարդանան Արուստամ աղա :
 Վարդանանց Գրիգոր աղա Պողոսեան :
 Վարդանան Տադէս աղա Թաշնիպաշ :
 Վարդապետան Գրիգոր աղա :
 Տադմուշան Արուստամ աղա :
 Տառնան Բ. Առաքել Սիսակ Էֆէնոսի :
 Տառնան Պ. Առաքել Էֆէնոսի :
 Տառնան Պ. Մկրտիչ Պէյ :
 Տառնան Բովնանէս Պէյ :
 Տառնան Բ. Ներսէս Էֆէնոսի :
 Տառնան Պ. Սպարապետ :
 Տառնան Պ. Նուէն օրիորդ :
 Տառնան Պ. Սիմօն Պէյ :
 Տէր Բովնանէսան Ղապարոս աղա :
 Տէր Վրթմանէսան մահտեոյ Գրիգոր աղա :
 Տրդնապետն Զարուիլան աղա Կեսարացի :
 Տօնեկան Գալատացի Եփեսոս Էֆէնոսի :
 Բէկդէան Մկրտիչ Պէյ. (3 օրի) :
 Բէրիմ ճիւղայէ մահտեոյ Մկրտիչ աղա :
 Փանոսան Գեորգ աղա :
 Փափաղեան Գեորգ Մկրտիչ. (2 օրի) :
 Փէշարմաշան մահտեոյ Մկրտիչ աղա :
 Փէշարմաշան մահտեոյ Սահակ աղա :
 Քամուլաքեան Փանոսի Անտոն աղա. ոտկերիչ :
 Քարակէօղեան Սիւրբէլ աղա օրմաքէշ :
 Քաջարեան Առաքել աղա :
 Քէմաշնան Որդիկ Էֆէնոսի (2 օրի) :
 Քերէստէնէան Էնթր աղա :
 Քէշիկէկան Բովնանէս աղա Կեսարացի :
 Քէշպաղան Մարտիրոս աղա Սաղմոյի :
 Քընաճան Զարուիլան աղա :
 Քհնանէան Եսայա և Բարսեղ աղայք :
 Օհան աղա :
 Փէնեւնէան Բովնակ՝ աղա :
 Փրէնկեան Եսայա Էֆէնոսի Կեսարացի :

ՀԱՅ ՓԱ

Գարեբեան Ետեկան աղա Անդի :

ՀԻՆ ՆԱԽԷՋԵՆԻԱՆ

Արթ. Մեարմէ վարդապետ Մարտեանց :

ՂԱՐԱՔԱՂ

Արթ. Արիստակէս վարդապետ Սեդրակեան :

ՄԱՆԱԲԱՆ

Մեարմէնէան Բովնակ՝ աղա :
 Պիտակեան մահտեոյ Բովնանէս աղա :

ՄԱՐԱՇ

Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժապետն Նուէրի՝ Մեծ.
 Եակոբեան աղայէ որ յԱղէքսանդրիս :
 Ճանաչեան մահտեոյ Սարգիս աղա :

ՄԱՐՁՈՒԱՆ

Գեր. Բովնանէս Արքեպիսկոպոս Եղեանեան :

ՅՈՊՊԵ

Արթ. Ալմանտ վարդապետ տեսուչ :
 Մտաթէնտեան Զովնիկ աղա :
 Ս. Սուրառեան Սիմօն աղա :

ՆԻԿՈՍԻ ԴԻԱ

Գեր. Նիկիոցոս Արքեպիսկոպոս տեսուչապետ
 փոխաւոր :
 Թանդարան վրձնաւորեան Նիկիոսիայ :
 Տէր Կարապետեան Մկրտիչ աղա :
 Տէր Մինասեան Եղեմ աղա :

ՇԱՊԻՆԱՐԱՅԻՍԱՐ

Գեր. Աբրահամ Արքեպիսկոպոս :

ՈՒՆԵԱ (ԶԵՅԹՈՒՆ)

Սուրբ Բովնանէս եկեղեցւոյ վարժապետն. Նուէրի՝ Մեծ. Եակոբեան աղայէ որ յԱղէքսանդրիս :
 Սուրբ Եակոբ եկեղեցւոյ վարժապետն. Նուէրի՝ Մեծ.
 մահտեոյ Նազարէի աղայէ Ս. Գաբրիէլ :
 Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ վարժապետն ի՛նչ Նուէրի՝ Մեծ. մահտեոյ Նազարէի աղայէ Ս. Գաբրիէլ :
 Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ վարժապետն :
 Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժապետն :

ՊԱՆՏԱՏ

Իսկէնտրեան մահտեոյ Խաչիկ աղա :
 Իսկէնտրեան մահտեոյ Իսկէնտր աղա :

ՊԵՐՈՒԹ

Արթ. Վարդան վարդապետ տեսուչ :

ՍԵՐԱՍԻԱ

Գեր. Կարապետ Արքեպիսկոպոս :
 Արթ. Պետրոս վարդապետ :
 Ահարոն (մահտեոյ) աղա :
 Աշոտեան Մահտեոյ Բարէլ աղա :
 Տ. Թէոդորոսեանց մահտեոյ Մարտիրոս աղա :

ՍԵՒԵՐԵԿ

Արթ. Եփրեմ վարդապետ Եղեպոյի :
 Եազուպեան Սարգիս աղա :
 Իշկէնեան Պետրոս աղա Մատենցի :
 Ենի քանչեան Մարգար աղա Անդի :
 Սանտրգ չմին Կերկոս աղա :

ՎԱՆ

Արթ. Բովնանէս վարդապետ Ընտուշեանց :
 Առաքելեան մահտեոյ Մարտիրոսեան Մարգար աղա :
 Խաչատուրեանց մահտեոյ Մկրտիչ աղա :
 Նաթանեան մահտեոյ Հաւարածու՝ աղա :
 Պօշտեանց Գեորգ աղա :

ՏԻԳՐԱՆԿԵՐՏ

Գեր. Եակոբ Սրբազան Արքեպիսկոպոս :
 Ճանաչեան Առաքել աղա :
 Մինասեան Բովնանէս աղա :
 Պապուց մահտեոյ Օհան աղա :

ՏՐԱՊԷՋՈՆ

Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս (2 օրի) :
 Արթ. Գրիգորիս վարդապետ :
 Բարեհաւառ. Լ. Գալոյի :
 " Մեարմէնեան Գալոյի կնիքաւորներ :
 " Գալոյի կնիքաւորներ :

Գառապարեան Եակոբ աղա :
 Գրիգորեան Նիկիոցոս աղա :
 Խրաքեան Վարդան աղա :
 Կիւրղէնեան Կարապետ աղա :
 Կիւրճիեան Պողոս աղա :
 Մահտեան Արիստակէս աղա :
 Մեղաւորեան Սարգիս աղա :
 Մինասեան Զօհանէս աղա :
 Եակոբեան մահտեոյ Նոնիկ աղա :
 Ս. Մեղաւորեան Խաչիկ աղա :

ՓԱՐԷ

Թիւրապեան Պետրոս աղա :
 Եակոբեան Մարգար աղա :

ՔՐԻՍՍ

Եակոբ աղա Անդի. (2 օրինակ) :
 Պապրեան Կարապետ աղա. (2 օրինակ) :
 Պապանեան Գեորգ աղա :

ՔԻՇԵՆԻ

Արթ. Գրիգոր վարդապետ տէր Ստեփաննոսեան

ՑԱՆԿ

Փ Ե Տ Ր Վ Ա Ր

Եգգային վարչական նոր փոփոխութեան վրայ	25
Օրացուցական խնդիր	29
Լղելէ վարդապետ և իւր Նրկասիրութիւնը	32
Հանգէս պարգեւաբաշխութեան և Շատր	35-39
ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Եռաբլնի ու Քաղաքակիրթ պատանի (Հարոհակէլ)	39
Եռակ	42
Յիսուս Քրիստոս	45
ԺԱՐԱՆԱՅԱԳՐԱԿԱՆՔ . — Յաճախութիւն Նշրուպցի ճա նապարհորդաց . — Գալուստ Գառաւորի քաղաքիս . — Չալալեան Գեր . Ս . Ըրքեպիսկոպոս . — Նրկրա գործարան ընկերութիւն . — Ըրճակումն քանի մի աշակերտաց . — Գալուստ նորեկ ժառանգաւորաց . — Նորատիպ և Սամրյ յանձնուած գրեանք	47
Օւռարձարիք . (Հարոհակէլ)	48

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիճը ամէն ամիս կը հրատարակուի 24 էրեսէ բաղկացեալ ութածալ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիթլէ հանգերձ ճանապարհի ծախ-
քովը, կանխիկ վճարելի :
- Գ. Զան տեարակ առնել ուղղոյ, պէտք է ամէն մէկ անգործն չորս դա-
հեկան վճարէ :